

ԱՍՏՈՒԹՈՅ ԾՐԱԳՐԱԾ  
ԿԵԱՆՔԸ

2534

Թարգմանուած Անգլիարեն

ԵՓՐԱՑ-ՑՊԱՐԱՆ

ԽԱՐԲԵՐԴ

1913

244  
Ա-76

0105

## ԱՍՏՈՒԾՈՅ ԾՐԱԳՐԱՅ ԿԵԱՆՔԸ

«Թնջու որ մենի լնոր ձեռազործն ենի քրիստո Յիսուսով սեղծուած, բարի զարծերու համար— որոնց կասուած առաջուց պատրաստեց մեզ որ անոնց մէջը բալենի:»

ԵՓ: 2, 10

«Քրիստոս Յիսուսով ստեղծուած» կը նշանակէ թէ ամէն Աստուծոյ զաւակ Քրիստոս Յիսուսով՝ նոր արարած մ'է: «Բարի զործերու համար:» Այս ալ կը նշանակէ թէ Աստուծոյ այս տեսակ զաւակը Քրիստոս Յիսուսով նոր ըստեղծուած մըն է: «Որսկ Աստուած առաջուց պատրաստեց:» Այդ կը նշանակէ թէ մեր գոյութենէն առաջ Աստուած Քրիստոս Յիսուսով ծրագրած է մեզի համար ծառայութեան կեանքը: «Որ անոնց մէջ քալենք:» Քայելը գործնական բառ մըն է: Այդ կը նշանակէ թէ Աստուծոյ իր զաւակներուն համար ունեցած մեծ նպատակը միայն երեւակայութիւն մը չէ, այլ գործնական իրականութիւն մըն է, որ մեր ներկայ գործի կեանքին մէջ ճանջնալու և ապրելու ենք: Ուստի այս բոլոր վկայութեան մէջն կ'ընթանայ սա մէկ գերազ ոյն խորհուրդը թէ—

\*\*

B 2001



Քրիսոս Յիսուսով ամեն կեանի համար  
Ասուած ծրագիր մը ունի:

Ի՞նչ զարմանալի ճշմարտութիւն է այս և  
որչափ ալ բանաւոր: Եթէ ճարտարապետ մը  
կը ծրագրէ փառաւոր պալատին յատակա-  
գիծը: Աբուեստագէւար կ'ուրուագծէ իր գը-  
լուխ գործոցին ծրագիրը, նաւաշէնը իր հսկայ  
նաւուն յատակագիծը կ'որոշէ, Միթէ Ասո-  
ուած ծրագիր չ'ունի անմահ հողիներու հա-  
մար որ գոյռութեան կը բերէ և Յիսուս Քրիս-  
տոսի կը միացնէ: Հարկաւ ծրագիր մ'ունի:  
Այո՛, այսպը որ երկնակամարին վրայ կը տատա-  
նի, ամէն խոտի ծիղ որ իր ծզօտը դէպի եր-  
կինք կը բարձրացնէ, առատուան արեւուն առջե-  
ամէն ցողի կամիլ, արևէն եկած ամէն լուսոյ  
ճառագայթ որ երկրին սահմանին միջոցէն  
կ'անցնի. այս բոլորին համար Աստուած նպա-  
տակ մը և ծրագիր մ'ունի: Ուրեմն որչափ ա-  
ւելի քեզի համար որ բուն իրենն ես, Յիսուս  
Քրիստոս նախապէս պատրաստած է կեանքի  
ծրագիրը: Եւ ոչ միայն այսքան այլ՝

\*\*\*

Ասուած յու կեանի համար ծրագիր մ'ունի  
որ ո՞չ ոյ կրեայ իատրել

«Բոլոր տարիներուն մէջ երբէք եղած չէ և  
պիտի չըլլայ ինծի նման մարդ մը, կին մը,

Ես մէկ հատ եմ և երկու չեմ:

Այդ ճշմարիտ է, ոչ երկու տերեւներ, ոչ  
երկու գոհարներ, ոչ երկու աստղեր և ոչ երկու  
կեանքեր իրարու նման են: Ամէն կեանք Աոյ.  
համար նոր խորհուրդ մէ աշխարհի մէջ: Աշ-  
խարհի մէջ մարդ մը չիկայ որ քու գործերդ  
ընէ այնչակ լա՛ որչափ գուն պիտի ընես, եթէ  
գուն չես գտներ ու չես հետեւիր Ա.ծ.յ. քու  
կեանքիդ համար ունեցած նպատակին, բան  
մը պիտի պակսի այս փառքէն որ պիտի վայե-  
ւիր: Ամէն գոհար իր փայլովը կը փայիր, ա-  
մէն ծաղիկ իրեն յատուկ անուշահոտութիւնը  
կը բուրէ: Ամէն բախտունեայ Քրիստոսի լոյսէն  
ու անուշահոտութենէն մաս մ'ունի, որ Ա.ծ. ա-  
նոր միջոցաւ ուրիշներուն պիտի փոխանցէ:  
Ա.ծ.քիզի մասնաւոր նմանութիւն մը տուած է,  
Ա.ծ.մեզի անհատականութիւն մը տուած է:  
Ա.ծ.ստեղծած է նաև շրջանակ մը անհատներէ  
բաղկացեալ, որուն մէջ ամէն մէկ անհատ իր  
տեղն առնելու է այս ընդարձակ աշխարհի մէջ:  
Ոչ ոք կրնայ այդ անհատին տեղը լիցնել: Եւ  
ուստի Են կը չեւէ ու կը կարգագրէ քու  
կեանքդ, այնպէս որ քեզ բուն այդ շրջանա-  
կին մօտեցնէ: Ճիշգ մազի մը չափ եղած տե-  
ղափոխութիւնը հեռագիտակին վառարանին  
մէջ բաւական է որ մարդ տեմնէ գեղեցիկ տե-



37429-67

51181-Ա.Հ.

Հ Յ Ր Ա

սարան մը որ առաջ բոլորավին խառնաշխաթ ու  
աղօտ կ'երեւէր: Այսպէս ալ քըւ կեանքիդ մէջ  
անհտասականութեան մէկ ցորենի զանազանու-  
թիւնը՝ որ ուրիշ մարդիկներէն տարբեր կ'ընէ  
քեզ, պատճառ պիտի ըլլայ որ Յիսուս Քրիստոս  
տեսնուի քեզմով այնչափ յստուկ և գեղեցիկ,  
որ ուրիշ տեղ կարելի չէր աեմներ: Ինչ ա-  
ռանձնաշնորհութիւն մէկու մը՝ որ Յիսուս Քր-  
իստոս իր մէջ բնակած կ'ունենայ հան ալ մեծ  
խոնարհութեամբ: Խնչ ուրախութիւն գիտեալ  
թէ Ած. քեզ կը գործածէ իբր ընդունակ այս  
ինչ գործին համար և ուրիշ որեւէ մէկուն չի  
յանձներ զայն: Դու մէջդ գոհարի անկիւնա-  
ւոր պղափկ փոփոխութիւն մը կայ և ահա  
մարդ ըստ կը տեսնէ հոն: Քու մէջդ համե-  
մունքի խառնուածքի պղափկ տարբերութիւն մը  
կայ և ահա այդ պատճառաւ մէկը Քրիստոսի  
անուշահոտութիւնը կը ճանչնայ քեզմով:

\* \*

Մարդ մը կրնայ թերամալ հետեւերու Ասրուհոյ  
ծրագրած կեանիին մէջ

Պղտիկ ձկնորս զիւղ մը այցելեցինք ամառուան  
վագանձին առթիւ: Մեր տեսած շատ մը հե-  
քրքրական բաներէն մին էր զոյդ մը արծիւնե-  
րու բանտարկութիւնը, ասոնք երկու շարաթ-  
ուան եղած ատենէն բռնուած ու փակուած է:

ին սենեալի մը անկիւնը խոշոր վանդակի  
մը մէջ:

Արծիւները տարուէ տարի մեծցան և ի-  
րենց ցեղին գեղեցիկ օրինակները եղան, ի-  
րենց թեւերուն տարածութիւնը մէկ ծալլէն  
մէւոր վեց ոտք էր: Ուրիշ ամառ մը երբ մեր  
սովորական վագանձին եկանք այս զիւղը, ար-  
ծիւները կորսուած էին: Արծիւներուն աիրոջը  
հարցուցինք անոնց մասին, հետեւեալ պատճու-  
թիւնն ըբաւ: Տէրը լծէն հեռու ձկնորսութեան  
գացած ըլլալով ուշացաւ: Քանի որ տէրը բա-  
ցակայ էր, քանի մը շարաճճի տղայը վանդակին  
դուռը բացած էին ու այս մեծ թռչուններուն  
աղատութիւն տուած էին: Անսնք ալ անմի-  
շապէս չանացած էին փախչիլ, բայց քանի որ  
իրենց պղուկութենէն իվեր բանտարկուած էին,  
երբէք թռչիլ սովորած չէին: Այնպէս կը թը-  
ուէր թէ անոնք լաւ հասկցած էին թէ Աստ-  
ուած կ'ուզէ որ իրենք խեղճուկ արարած մը ըլ-  
լալէ աւելի բան մը ըլլան: Այս ձանձրացուցի  
տարիներէն ետքն ալ հաստատութեան և տիե-  
զերքի հանդէպ իրենց ունեցած բնաղդը տա-  
կաւին կենդանի էր իրենց սրտին մէջ: Ամե-  
նայն յանդգնութեամբ չանացին իրենց մտքէն  
անցած խորհուրդը գործադրել: Գիւղին կա-  
նաչներուն վրայ տապլակեցան, մաքառեցան,

ինկան, թեւերնին շատ անգամ արգահատելի կերպով իրարու կը զարնուէին աղատ օգին մէջ բարձրանալու համար, որուն Ա.ծ. Նախասահմանած էր զիրենք, Բայց էզո՞ւր, անոնցմէ մէշ կը պղտէկ գետակին վրայէն անցնիլ փողձած ատեն անդուսութեամբ չուրին մէջ ինկաւ և խեղդուելէ աղատելու համար օգնութեան կը կարօտէր, միւսը յաջորդական յուսախաբութիւններէ և անկումներէ վերջ, որոշեց մօտակայ ծառին ամենէն վարի ճուղերուն վրայ հանդչիլ Անգութ տղայ մը մեռցուց զայն իր ընկերն ալ նոյն անողոք բաղդին մատնուեցաւ Այսպէս իրենց չղթայուած կեանքին տիսուր ողբերգութիւնը՝ վերջացաւ Այս բանտարկը ուած արծիւներուն ողբերգական կեանքէն շատ դասեր կրնանք սովորիլ Աստուած այսարքայազուներուն համար նախապատրասեած էր աղատութեան աղնիւ ժառանգականութիւն մը իրենց պարտքն էր օրուան տաք օգը ճեղքել ու թաշիլ իրենց արքայական թահչքովը իրենց դորձն էր բոյն շխել բարձր ժայռի մը վրայ, ուր երբէք մարդ չի կրնար ելլեր իրենց պարտքըն էր անխոնչ թեւերայ հոյերուն ու փոքրորիկներուն դի՛ագրել օգին մէջէն իշխանական ժառանգութիւնն անշուշո իրենցին էր, Բայց մարդու մը անդութիւնը անուսու-

թեան մէջ բանապրկեց զիրենը և զրկեց այս ամենէն, փոխանակ ծրագրած անսահման աշխատութիւնը վայլելու եղան գերիներ, ընկճըռուածներ, անյոյներ, և մահապարտներ, Մինչիւկ այս օդային թռչունները Ա.ծ. ծրագրած կեանքին դէմ թերացան, մարդոց որդիները շատ աւելի կրնան մխալիլ Ճիշտ ալ չէ որ Պօլոս կ'ըսէ, «Ահով ու գողով ձեր անձերուն վրկութիւնը գործեցէք, ինչու որ Ա.ծ. է որ ձեր մէջը կը ներգործէ կամնալն ու ընելը իր հածութեանը համար» Այս ներքին ձայներն ի՞նչ են որոնց եթէ չանսանք կը գագրին: Ի՞նչ են այս տեսիլքները, որոնց եթէ չի հետեւինք կ'անհեախն: Ի՞նչ են Քրիստոսի համար եղած այս բոլոր եռանդները, որոնք եթէ չի մարմնացնենք կը մեռնին: Ի՞նչ են անոնք: Եթէ ոչ կենդանի Աստուածն է որ կը գործէ մեր մէջ կամենալն ու ընելն՝ այն կեանքի գործը որ Ա.ծ. ծրագրած է մեզի համար 'ի յաւիտենից: Այն որուն կը կանչուինք, «Գործեցէք», սիրով գործեցէք, ամէն օր հաւատարիմ ծառայի մը նման: Գործեցէք իսչպէս որ Ա.ծ. կը գործէ ձեր մէջը: Գործեցէք ալ աւելի: Կրնաս զանց ընել: Քու կեանքիդ համար ունեցած Ա.ծ.: կատարեալ ծրագրին մէջ շատ թերի ըլլալ: Ուս-

տի «Ահով ու դողով գործեցէք» նշանակելի բառերը ասոնք են, աղդաբարարող բառեր, մեղմ յանդիմամութեան բառեր։ Ոյդ օրհնեալ կեանքը վկայութեան և պտղաբերութեան կեանքը որ Ած. կարգադրած է քեզի համար Յիսուս Քրիստոսով իյաւիտեհնից—գործէ զայն վախով ու դողով։ Դողալով որ չըլլայ թէ աշխարհիս Աստուածը խաւարեցնէ քու տեսութիւնդ այն ծառայութեան հանդէպ, որ միշտ քու առջեղ կը գնէ։ Դողալով որ չըլլայ թէ քեզ շրջապատող ըրիստոնեայ ընկերներուդ ցած գաւակիարականը սողարու մակարդակին իջեցնէ քեղ։ Դողալով որ չըլլայ թէ թերանաս ազօթելու, գրամ տալու և մինչիսկ երթալու պարտականութեանդ մէջ երկրիս մութ անկիւնները գտնուածներուն՝ որ երկար ատենէ իվեր Ած. կարգադրած է քեզի համար։ Դողալով որ չըլլայ թէ աշխարհային հաճոյքի և փառասիրութեան ձայներ ականջներդ խլացնեն՝ այնպէս որ ալ չլսես այն միշտ փախացող ձայնը որ կ'ըսէ «Ետեհս եկուր»։ «Իմ ետեհս եկուր»։

\* \*

Աստուծոյ կոչումը զանց բներու մէկ պատճառը բուն մեջ ուղած կոչումը ընտրելու փափաքն է։

Ո.մէն օր մարդ կոչում մը ընտրելու փայ

կը խօսի Բայց այս խօսքը պարզ սխալ մը չ'է քանզի մարդ մը ինչպէս կրնայ իր կոչումը ընտրել, եթէ մարդ մը կանչուած է, այլես ինք չընտրեր։ Ընտրողը մէկ մ'է։ «Դուք զիս չընտրեցիք հապա ևս ձեզ ընտրեցի և դրի որ երթաք ու պտուզ բերէք» կ'ըսէ մեր Տէրը։ «Մարդիկ այնպէս կը զործեն իբր թէ Աստուած կարդ մը ծրագիրներ դրած է իրենց առջե, անոնք իրենց հաճոյ եղածը կը ընանութպան մը մետաքսի կաժերը յաճախորդ կնոջ մը կը ցուցնէ և ան կ'ընտրէ ինչպէս որ աչքին կը զարնէ։ Բայց այդ ձշմարիտ չէ։ Ընտրեն Աստուծոյ գործըն է։ Մեր գործն է պարզապէս հաւանիլ և հնազանդիր Աստուծոյ Որդոյն կեանքին առաջնորդութիւնը կ'ըլլայ մինչեւ վերջը յաւիտենականութեան մէջ անոր անձին փրկութեանը համար։ Աստուած իր գերագոյն արտօնութիւնը կը պահանջէ երկու պարագային մէջ ար Մարդը որ այսինչ բանին համար կը վատահի Աստուծոյ իսկ ուրիշ բանի մը համար կը թերահաւատի, մահացու սխալ մը կը գործէ։ Երանի թէ մենք կանուխէն սովորած ըլլայինք թէ որշափ անդամ մեր անվարժ ձեռքով եղծաներ ենք մեղի համար պատրաստուած լաւ ծրագիրը։ Խոնարհ սրտով ճանչնակը մեր պակասը,

խոստուանինք մեր սխալը, որ ըրած ենք սոսկ  
մարդկային փոփոխամտութեամբ։ Երիտասարդդ  
բարեկամ, դուն այնպէս տեղ մը կը կենա՞ս  
ուր մարդիկ կը ստիպեն քեզ կոչում մընթրե-  
լու։ Կեանքի գործին մէջ անձնական ընտրու-  
թին ընելու մահուան յաղթած չե՞ս։ Մի՛ շա-  
նար ընտրել։ Այս համարը չըսե՞ր թէ Յիսուս  
Քրիստոսով ստեղծուած ենք բարի գործերու  
համար։ Եթէ ծրագիրը Քրիստոս է՝ ինչպէս  
պիտի գտնես Զայն, Զէ՞ս որ Քրիստոսի երթա-  
լով։ Ուստի մի միայն Աստուծոյ զնա՛, պար-  
զութեամբ, վստահութեամբ, վստահութեամբ և  
աղօթքով, խնդրէ անկէ որ ցուցնէ քեզի ինչ որ  
ինք ընտրած է քեզի համար։ Եւ քանի որ  
գուն կը քալես այն առօրեայ լոյսովն, որ Ա.ծ.  
քու ճամբուգ մէջ սփռած է, Ան ապահովապէս  
պիտի առաջնորդէ քեզ իր կարգադրած կեան-  
քի ծրագրին մէջ։ Այնպէս որ գուն անջատ պի-  
տի ըլլաս այն ցաւէն, յուսահատութենէն և սլ-  
խալէն, որոնք կ'ելլին այն մարդուն ճամբուն  
վրայ որ ինք իրեն ճամբայ կ'ընտրէ և շատ ուշ  
դիտակցութեան կուգայ, թէ Աստուծոյ վստա-  
հելու է իր կեանքի այս մեծ խնդրոյն և ու-  
րիշ ամէն խնդիրներու մէջ։ Ուստի մէկզմէկ  
խրատելու պէսքը կ'զգանք թէ՛ մարդ կրնայ  
սխալի Աստուծոյ իրեն համար ծրագրած կեան-

քին մէջ։

Մարդ կրնայ սխալի բուն իր կարճատեսու-  
թեամբը, կամապաշտութեամբը, անհնազան-  
դութեամբը կամ իր անձնական ընտրութեամ-  
բը։ Արդ, աւելի օրհնեալ ճշմարտութեան մը  
անցնինք թէ—

\*\*\*

Ամեն Աստուծոյ գաւակ իր կեանին համար  
Աստուծոյ լրած ծրագիրը իրնայ զտնել և անոր հետեւի

թիշէ Պրուկինի կամուջին ճարտարագէ-  
ախն պատմութիւնը։ Կամուրջին շինութեան  
ժամանակ ճարտարագէտը վնասուեցաւ և ամիս-  
ներով իր սենեակին մէջ փակուած մնաց-  
իր ծիրքերով օժտուած կին ը իրեն տե-  
ղին անցաւ ու իր էրկան ծրագիրը գործա-  
ւորներուն սովորեցուց։ Վերջապէս հսկայ կա-  
յուրջը լմնցաւ։ Խեղանդամ ճարտարագետը  
զայն տեսնել ուզեց։ Զինք պատգարակի մը  
վրայ դրին ու կամուրջին քով տարին։ Այնպէս  
տեղ մը տարին որ այս փառաւոր շէնքը իր  
բոլոր գեղեցկութիւններովը կրնար տեսնելը  
ճարտարագետը հոն պառկեցաւ անյուսութեամբ  
ուշի ուշով քննելով իր հանճարին գործը  
Դիտեց մեծ հեռագրապարանները, միաձոյ կա-  
մարակալներն և զօրաւոր խարսխարանները, որք  
գետնին հետ շղթայած էին կամուրջը։ Քըն-

Նագատ աչքերը գարձուց ամէն գերանի, աշմէն հեծանի, չուանի և ձողի վրայ:

Դիտեց թէ ամէն մանրամասնութեամբ կատարուած էր ինչ որ երազին մէջ տեսած էր, բայ իր ծրագրին և ցուցակին: Եւ քանի որ իր ձեռնարկին ուրախութիւնը սիրտը կը լեցնէր, երբ կը տեսնէր թէ իրականացած և ճշտի կատարուած է ինչ որ ինք ծրագրած էր, մորի յափշտակութեամբ մը աղաղակեց «Ճիշդ ծրագրին նման է, ճիշդ ծրագրին նման է»:

Մենք ալ օր մը պիտի կայնինք փառաց մէջ և դէպի իր երեսը նայերով պիտի աղաղակենք, Ո՛վ Աստուած, շնորհակալ եմ քեզմէ, որ զիս դարձուցիր իմ յամառ և կամակոր ձամբայէս ըու սիրելի ու կատարեալ ճամբուգ: Շնորհակալ եմ քեզմէ որ դուն միշը առաջնորդեցիր ինծի որ քեզի բերեմ իմ խոնարհ կեանփաս: Շնորհակալ եմ քեզմէ որ երբ օրէօր կը քալէի ծառայութեան պարզ շատիզին մէջէն, թոյլ տուիր ինծի որ մէկիկ մէկիկ հաւաքեմ իմ կեանփիս համար ունեցած մէծ նպատակիդ սոկեզէն թելերը:

Շնորհակալ եմ քեզմէ որ երբ տկար սողունի մը նման բարձր լեռան կողմ իվեր կը մադլցէի և կենաց շատիզը կերթայի թէ լոյսի և թէ մութի մէջէն, ակարութիւններու և արցոնքներու մէջէն, թերութիւններու եւ վարանոմներու մէջէն:

վերջապէս Դուն զիս հասցուցիր անոր նպատակուած վախճանին: Արդ, հիմա որ ես կը տեսնեմ իմ լմնցած կեանքս, այլ երես առ երես քու փառքիդ պայծառութիւնը կը տեսնեմ Շնորհակալ եմ քեզմէ, ո՛վ Աստուած, շնորհակալ եմ քեզմէ որ այն ճիշդ ծրագրին կը նմանի: Ճիշդ ծրագրը ին կը նմանի:

Ուրեմն բանի որ մենք զգուշութեամբ և եռանդով բալերու կը կարօտինք, որ չ'ըլլայ թէ թերանաք Աստուածոյ մեզի համար ունեցած կամքն ընելու մէջ, թող չը յուսահատինք խորհելով թէ մենք սարդկային տկար արարածներու այնշափ հեղեղուկ այնչափ անկման ենթակայ ենք, որ կրնանք սիսալիլ այդ ծրագրին մանրամասնութիւններուն մէջ: Սա յիշել կը բաւէ—Աստուած շատ գեղեցիկ կերպ մը ունի սիսալը կառավարելու երբ մեր սիրտն անոր հետ շիտակ է: Այդ է ամենէն էական բանը: Մեր մէկ գիրքը կրնայ եղծանեյ անոր սիրոյ նպատակը, և այն է՝ մերժել մեր կեամքն ու կամքը իրեն սիրոյ նպատակին յանձնելու Բայց երբոր մեր կեանքը համեստութեամբ իսրեն յանձնած ենք, մեր կետնքին շատիզին մէջ յառաջ եկած սիսալները, մարդկային տկարութիւններն ու թերութիւնները քաղցրութեամբ

և օրհնալից կերպով պիտի շիտկուին Աստուծոյ  
կողմէն, քանի որ մենք կը յառաջանանք այդ  
ճամբուն մէջ. Ասիկայ նաւու մը առաջնորդուե-  
լուն կը նմանի, Երբ մեր ձեռքը անոր անիւին  
վրայ դնենք, աննշան չեղումով մը իր ընթացքը  
կը փոխէ, բայց ասիկայ բան մը չէ: Երբ մեր  
նաւը անփոփխ կերպով Աստուծոյ կամքին  
բեւեռային առտղին յանձնենք մեր գիտցածին  
շափովը, նաւն իր որոշեալ նաւահանդիսար պի-  
տի համնի, առանց նայելու այն խոտորումնեւ-  
րուն՝ որոնք կը պատահին ձայբու մը վրայ:

\* \*

Հիմայ երես առ երես կը գտնուիմ զերազոյն եւ  
կարեւը հարցին առջեւ  
Այդ ալ այս է: Ինչպէ՞ս կրնամ ստուգել: Աս-  
տուծոյ ծրագրած նպատակը իմ կեանքիս հա-  
մար: Ինչպէ՞ս կրնամ բոլորովին պաշտպանուիլ  
սիալ ընթացքէ: Ինչպէս կրնամ զանազանել  
Աստուծոյ առաջնորդութիւնը իմ մարմաւոր  
փափաքներուս և փառասիրութիւններուս ա-  
ռաջնորդութիւնէն: Ինչպէ՞ս կրնամ գտնել  
ճամբան, որուն մէջէն Տէրը զիս քալելու կը  
կանչէ: Պատասխանենք: Առաջին:

\* \*

Հաւատա՛.

Մեր ամենամեծ նեղութիւնն այն է որ

մենք չենք հաւատար թէ՛ Աստուծած այսպիսի  
ծրագիր մը ունի մեր կեանքին համար: Մենք՝  
բուն մեր կերպը կ'առնենք և բուն մեր ծր-  
ագիրները կ'ընենք: Առանց զԱստուծած նկատի  
առնելու բուն մեր գործերը կ'որոշենք: «Այն  
մեր հաւատքին շափովը մեր մէջն է:» Եթէ  
մենք Աստուծոյ վրայ հաւատք չունինք այս  
բանին մէջ, ի՞նչ կընանք ակնկալելեթէ ոչ մո-  
լորիլ Աստուծոյ մեզի համար ըրած կարգադրու-  
թիւններուն մէջ: Եւ անգամ մ'ալ իրեն մեզի  
համար ըեարած օրհնեալ շատիշին ետ դառնալ  
այն ատեն՝ Երբ արդէն երկար ու անօգուտա թա-  
փառումներ ըրած ենք: Եփես. 2, 10 այն-  
շափ ներշնչեալ է որշափ Եփես. 2, 8 ծրագը-  
րած կեանքին խոստումը մէկ համարին մէջ  
նոյնշափ որոշ է, որշափ որ վրկութեան խոս-  
տումը միւս համարին մէջ որոշ է: Մտածէ՛ Այս  
համարին վրայ «Այդ պա՞րզ է, այդ Աստուծոյ  
խօ՞սքն է: Այդ որոշապէս չըսեր թէ Աստ-  
ուծած Յիսուս Քրիստոսով ծրագիր մ'ունի ձեր  
կեանքին համար: Ուրեմն հաստատ կեցի՛ր, հա-  
ւատա՛ատոր բոլոր անձովդ. Երբէք մ'ի խախտիր  
այդ հաւատքէն: Դարձեալ -

\* \*

Աղօրէ՛

Տօքթոր Հէնրի Թօսթը Ֆլեքթըն Սկրին-

կի բուժարանին հիմնիչը, Աստուծոյ զօրութեամբ ըլ զարմանալի մարդ մ'էր որ խորաթափանց տեսութիւն մ'ունէր Աստուծոյ խորհուրդին ու ճամբաներուն վրայ, որոնցմով Աստուծած կեանքի գործերուն մէջ կ'առաջնորդէ։ Այդ զարմանալի կարողութեան և իմաստութեան թեան գաղտնիքը ի՞նչ էր, Այցելուները վերոյիշեալ հարցումն ըրին ալդ մեծ հաստատութեան մէջը ծառայող ծեր բժիշկներէն մէկուն, Սա պատասխանը տուաւ։ Այցելուն իր քովը կանչեց։ Զայն տարաւ Տօքթոր Ֆօսթորի գործի սրահին դրան քով, տարաւ անոր նսենեակին մէկ անկիւնը գտնուող պղտիկ խուցը և հոն ձգուած կարպեաը վերցնելով ցուցաց այցելուին՝ կապերոին վրայ գտնուած երկու ծակերը, որոնք ծակեր էին անոր Աստուծոյ ծնրադիր ազօթելովը Տէ՛ր, Հէնրի Ֆօսթրին Աստուծային և մարդկային բաներու մէջ ունեցած իմաստութեան և զօրութեան գաղտնիքը ահա այս է։

Յարեկամ, երբ քու ննջանենեակիդ կարպեան սկսած է ծակիկ՝ մարդը որ կը բնակի այս սենեակին մէջ՝ ալ բնաւ պէտք չունի վախնալու թէ Աստուծոյ ծրագրած կեանքին մէջ պիտի սխալի։

Քանզի այդ իմաստութեան և զօրու-

թեան ինքնայայտ գաղտնիք մ'է այն մարդուն կեանքին մէջ՝ որ գիտէ ամէն բանի մէջ Աստուծոյ հետ քալել։

«Թէ որ ձեզմէ մէկը իմաստութեանէ պակսած է թող խնդրէ Աստուծունէ»

Դուն այն մարդոցմէ մէջին ես սրոնք իմաստութիւնէ պակսած են. Աստուծոյ իրենց կեանքին համար ունեցած ծրագիրը հասկընալու մէջ, Որքին խնդրէ՝ Աստուծոյ, աղօթէ վստահութեամբ, աղօթէ շարունակ, աղօթէ ակնկառոյց, աղօթէ և Աստուծած ճշդիւ պիտի առաջնորդէ այն օրհնեալ տեղն, ուր այնշափ վստահ պիտի ըլլաս թէ անոր ընթրած շաւիզին մէջն ես, որչափ որ վստահ ես քու գրկութեանդ մասին։

\* \* \*

Կամք ունեցի՞ր

Կամք ունեցի՞ր։ Կամք ունեցի՞ր Աստուծոյ կամքն ընել քու կեանքիդ համար՝ փոխանակ քու կամքդ ընելու։ Կենաց ծովին վրայ մի՛ նաւարկեր քու լնարած նաւահանդիսագ հասնեու. Համար՝ նայելով բուն քու գծած քարտէսիդ, որը շինած ես քու անձնասիրական հաճոյքներուդ ստիպումէն մզուած։

Դիմէ՛ Աստուծոյ։ Թու կեանքդ վստահութեամք Աստուծոյ յանձնէ՛, Յետոյ սկսէ՛ քու



կետնքիդ համար իր կամքն ընել՝ փոխանակ քու կամքգ ընեյու։ Այսպէս որոշ պիտի գիտանաս ու տեսնես Աստուծոյ կամքը այդ կեանքին համար։ Մեր Ցէր Յիսուս.յատակ կերպովը ըստած է զայս։ «Եթէ մէկը ուզէ իմ կամքս ընել, ինքը պիտի գիտնայ զայն»։

Մենք որչափ շուտ որ սկսինք ընտրել Աստուծոյ կամքը մեր կեանքին համար՝ փոխանակ մերինը, անտարակոյս մենք պիտի ճանչնանք Աստուծոյ կամքը։ Այս հոգեւոր ապակեայ դաշտին մէջ ուր կուգանք Աստուծոյ մեր կեանքին համար ունեցած կամքը տեմնելու, երկփող դիտակ մ'է, «Քով քովի երկու ոսպնաձեւեր կան «մէկը «Ես կ'ուզեմ» միւսը «Ես կը վատահիմ»։» Երբ որ մարդ մը այս երկուքը իր աշքին առջև ունի, այն ատեն շատ յստակ պիտի տեմնէ Աստուծոյ կամքը։

Բայց ենթագրենք թէ մարդ մը Աստուծոյ կ'ըսէ, «Ես կը տարակուսիմ»։ Այն ատեն հաւատքին սապնաձեին վրայ քովը կիյնայ։ Ենթագրենք թէ կ'ըսէ «Ես չեմ ուզեր։ Այն ատեն քովը կ'իյնայ միւս կամքի ընտրութեան սապնաձեին վրայ։ Պարզապէս այն մարդուն հոգեւոր տեսութիւնը խանդարուած է։ Այն կը բարի է սուն իր պատրաստած խաւարին մէջ որն յառաջ եկաւ իր անհաստատութեամբը ու կա-

րմապաշտութեամբը։ Սակոյն իր կուրութեամբը՝ այս բոլորին ակն ու պատճառը իր տկաւըմբոնումը կը սեպէ։ Բարեկամ, այսպիսի մը թութեան մէջ կը քովլե՞ս Կ'ընդունիս թէ քու կեանքիդ համար քու և Աստուծոյ կամքին մէջ տեղ քող մը կայ։ Մտիկ ըրէ, Սկսէ՛ հաւատալ Աստուծոյ ծրագրին՝ որ ունի քու կեանքիդ համար։ Այդ քողը կիսաթափանց պիտի ըլլայ։ Սկսէ ուզել Աստուծոյ կամքն ընել, այդ քողը թափանցիկ պիտի ըլլայ։ Սկսէ՛ օրէօր իրականապէս ընել Աստուծոյ կամքը։ Այդ քողը պիտի անհետի։ Եւ երբ անհետացած է և դուն Աստուծոյ լեցուն լոյսին մէջ կը բալես՝ որ ունի քու կեանքիդ համար. այն ատեն պիտի տեսնես թէ կամապաշտութիւնդ էր մինակ պատճառը՝ որ Աստուծոյ կամքին վրայ յստակ տեսութիւնդ կ'աղօտացնէր։ Քանիզի ոչ մէկը կը ընայ որեւէ միջոցով տեսնել Աստուծոյ կամքը, բայց միայն այս երկու յստակ սապնաձեերու մէջն։ Այսինքն վատահելի սրտի մը և յանձնուած կամքի մը մէջն։ Այս խնդրոյն նկատմամբ մէկը պիտի ըսէ, «Դնթագրենք թէ ես իմ կեանքս Աստուծոյ տուի և բոլորովին անոր կամքին յանձնըուեցայ. ինչ փոփոխութիւն կրնամ ընել, պէ՞սք է նոր միջավայր մը և չընանակ մը վնասեմ. ի՞նչ պիտի ընեմ։ Այդ հարցման պա-

տասխանը—

Ուր որ ես՝ հոմ կեցիր եւ տարբեր կերպով գործէ։

Աստուծոյ ծրագրին և նուիրման վրայ խօսելու ատեն, քրիստոնեաներէն շատերը կը խորհին թէ ձգելու են իրենց գործերը և ամպիսնի մը գլուխն անցնելու են կամ օտար Միսիոնարական գաշաերու մէջ գործել երթալու են ըստ իրենց տեսութեան։ Աստուծոյ ծրագրած կեանքին հետեւիլ ուրիշ տեղ մը երթալ լսել չէ։ Բայց առկէ աւելի մեծ սխալ մը ելքէք չ'կըրնար ըլլալ նուիրում անհրաժեշտ տեղափոխութիւն չի նշանակեր։ Ո՛չ ալ Աստուծոյ մարդուն կեանքին համար ունեցած ծրագիրը միշտ կը հարկադրէ որ ան ձգէ իր հայրենիքն ու բարեկամները։

Աստուծոյ վէնտուածը նոր տեղը չէ, անոր մարդ կը փնտուէ բուն իր միջավայրին մէջ։ Այդ փոխադրութիւն չէ այլ փոխակերպութիւն է։ Ընդհանրապէս դժուար խնդիրը տեղին մէջ չէ, այլ իր տեղին մէջ մարդուն հետ է։ Երբ բոր մարդ մը իր կեանքն Աստուծոյ կը նուիրէ։ Գտնելու կամ մտնելու Աստուծոյ իրեն կեանքին համար պատրաստած կատարեալ ծրագրին մէջ, ուր որ է ինք՝ ընդհանրապէս Աստուած ճիշդ հոն կը պահէ։ պայմանաւ որ Աստուծոյ

կամքին ու Անոր թշագաւոլութեան համար ապրի՝ փոխանակ իր անձին համար ապրելու։ Ուստի կեցի՛ր ուր որ ես, և ապրէ՛ Աստուծոյ համար մինչեւ որ Աստուած քեզի ուրիշ ճամբայ մը ցուցնէ։

Երկ Աստուած կ'ուզէ յեզ տեղ մը դրկել, Ան պիտի առաջնորդէ նեղի։ Ան ատեն վասահորեամբ նետեւ։

Տեսանք թէ նուկրում անշուշտ տեղափոխութիւն չի նշանակեր։ Թէկ այդ ալ կը լինայ ըլլալ, բայց ընդհանրապէս Աստուած կը պահէ մարդը ուր որ է, երբ մարդ իր կեանքը Անոր կը յանձնէ։ Այս ալ միշտ չի պատահէր, Աստուած կը լինայ քեզ աղատ թողուլ քու բնակած միջավայրէդ։ Աստուած կը նայ կատարելապէս փոխել միջավայրդ, ինչպէս և քեզ։

Աստուած կը նայ քեզ քու գործէդ և կամ պաշտօնէդ հանել և երկրիս հեռաւոր ծայրերը զրկել իրը իրեն ընտրեալ պատգամաւորը։ «Բայց ինչպէս պիտի ըլլայ այս» կ'ըսես։ Երբ գուն միւս կերպն ընես։ Աստուծոյ իմ և քու կեանքիդ համար ունեցած մեծ անպատակ ոսկեղէն շլթան զատ զատ օգակներէ շինուած է, որոնք յարմար ժամանակին կը նանք բռնել մեր առօրեայ պատեհութեանց մէջ։ Երբ մենք բաւական օղակներ հաւաքած ենք՝ շղթան երեւ-

Նալ կ'ըսկիսի։ Այն մարդը որ օղակները հաւատարկութեամբ հաւաքած է՝ շղթան կորսուելուն համար այլիս չի վախնար։ Ուստի կատարէ միւս գործը։ Եթէ այդ գործդ կատարես առօրեայ ծուայութեան՝ այս թելը Աստուծոյ ձեռքին մէջ կ'ըլլայ նման այն չուանին՝ որ իբր առաջնորդ կը ծառայէ լաբիւրինթոսներու մէջ։ Աստուած այս կերպով պիտի առաջնորդէ քեզ իր ճամքուն մէջ, որ ազառիս մթութենէ և անորոշութեան լաբիւրինթոսներէն, մինչև որ քու կեանքիդ համար ունեցած կամքին լուսաւորուած տեղն հասնիս Ուստի, համբերութեանմբ, հաւատարմութեամբ և սիրով ըրէ՛ գործդ։ Սորվեցուր աշակերտներո՛ւդ, այցելէ՛ հիւանդին, միսիթարէ՛ վշտացեալը, քարոզէ՛ խօսքը, գործածէ՛ թերթը և տետրակը, և ուր որ ես՝ վկայէ՛ Անոր համար։ Անկէ վերջը եթէ Աստուած ուղէ որ ուրիշ տեղ մը երթաս, անշուշտ քեզ պիտի առաջնորդէ գէպի հոն։ Միայն վստահութեամբ Անոր հետեւէ՛։ Այսպէս հետեւելով մեզմէ ումանք Զինաստան, Հնդկաստան, Ափրիկէ, պիտի երթան թերեւս։ Մեզմէ ումանք ալ պիտի կենան ճիշդ ուր որ են, Բայց վերջապէս մեզմէ ամէն մէկը պիտի ըլլայ ճիշդ հոն՝ ուր որ Աստուած կ'ուզէ, և այդ է իր ծրագիրը մեզի համար։ Մէկը պիտի ըսէ, այս բոլորը ճշմա-

րիտ է երիտասարդին և զօրաւորին համար, ուրոնք իրենց առջևն ունին ամբողջ կեանք մը ունին։» Բայց իրեն համար շատ ուշ է՛ իմ կեանքը սխալներու ու անկումներու կեանք մ'եղած է՛։ Տարիներ թափառելէ վերջ Քրիստոսի եկած եմ։ Ոչինչ մնացած է ինծի հաւար, բայց միայն սխալանաց յիշատակներ և անհետացած ու ջախջախուած կեանքի մը բռկոյները։ Բարեկամ, ունկնդրենք սա ճշմարտութեան։

\*\*\*

Միայն Աստուած է որ լոս երեւոյրին ջախջախուած կեանիք մը կրնայ առնել եւ այն բնկովներէն զեղցիկ կեանիք մը շինել։

Լուսած ե՞ս պատմութիւնը։ Հին քաղաքի մը մէջ մեծ մայր եկեղեցի մը կար։ Այս մայր եկեղեցւոյն պատուհանին ապակին ղարմանալի զեղեցկութեամբ մը ներկուած էր, այնպէս որ անոր համբաւը ամէն կողմ տարածուած էր։ Հեռու տեղէ ուխտաւորներ կուգային այս գեղարտուեսամին գլուխ գործոցը տեսնելու համար։ Օք մը ստակալի փոթորիկ մը եղաւ։ Փոթորիկին սաստկութենէն ապակին մարմարեայ գետնին վրայ ինկաւ և հարփիւրաւոր կատրներու բաժնը ուեցաւ։ Ժողովուրդին ցաւը մեծ էր այդ արկածին համար որով քաղաքը զրկուեցաւ յանկարծ, իրեն հպարտութեան առարկան եղող դե-

զարուեստի գլուխ դործոցէն։ Բեկորները հաւաքեցին, սնտուկի մը մէջ դրին և եկեղեցին մառանը տարին։ Օր մը օտարական մ'եկաւ և ուզեց գեղեցիկ պատուհանը տեսներ։ Մնոնք պատահած գժբաղդութիւնը պատմեցին անոր, Օտարականը հարցուց թէ կտորները ինչ ըրած էին։ Անոնք զայն մառանը տարին և ապակիին կտորները անոր ցաւցուցին։ Մարդնը սաւ «Կ'ուզէ՞ք այս կտորները ինձի տալ։» Պատասխանեցին առ, այլևս ատոնք օգուտ մը չունին մեզի հտամար։ Ալլցելուն զգուշութեամք մնտուկին իր բազուկներուն մէջ առաւ ու տարաւ։ Շաբաթներ ետքը եկեղեցիին խնամականերուտն հրաւէր մը եկաւ։ Հոչշակառը արուեստագէտն խրկած էր այդ հրաւէրը ցուցնելու համար անոնց ջախջախուած ապակիին վրայ երեւոն բերած իր ճարտարապետական հանճարը ջանոնք իր արուետանոցը հրամցնելով մեծ քօղի մը առջև կայնեցաւ։ Երբ չըռան մը քաշեց՝ կանեփեայ վարագոյրը գետինը ինկաւ։ Իրենց աչքերը յառած սքանչացումով կը գիտէին իրենց առջև գրուած պատուհանի ներկուած ապակիին գեղեցիկութիւնը՝ որուն նմանն երբէք տեսնուած չէին։ Քանի որ անոնք կապշէին անոր հարուոտ գոյներուն և զարմանալի ձեւին վրայ, ճարտար արուետագէտը

դարձաւ ու ըսաւ, «Այս պատուհանը ձեր ջախջախսուած ապակիին կտորներէն շինեցի և հիմա պատրաստ է նորէն իր աեղը գլուելու։ Մեծ պատուհանը անգամ մ'ալ իր գեցեցկու։ Թեան լոյալ ցոլացուց հին մայզ եկեղեցիին մը թաղնած խորանին վրայ։ Այս նոր փայլունութիւնը հին փառքը գերազանցեց, և ասոր եղական ձեւին համբաւը ամէն տեղ տարածուեցաւ։

Ընթերցո՞ղ, մտքէդ կ'անցնես թէ քու ծրագիրը խորտակուած է։ Ենորհակալ եղիր Աստուծմէ և սիրտ առ։ Դուն չ'սովորեցա՞ր թէ քու ըրած ծրագիրներուդ չատին ամենէն յարմար տեղը գուրսն է, աւելցուքի տեղն է։ Շատ անգամ զանոնք գուրսը՝ հոն նետելու ես կոյր աչքովդ տեսնելէն առաջ այն լաւագոյն ծրագիրը՝ զսր Աստուած քու կեանքիդ համար պատրաստած է։ Ինչպէս է այդ ծրագիրը քու կեանքիդ մէջ։ Մեզքը ապականած է զայն նախկին տարիներուն մէջ ըրածդ սխաներն ըստ երեւոլթին ջախջախսեցին զայն։ Ուրախութիւն ու քաղցրութիւն անհետացան են անկէ։ Այնպէս կը թու՞ի քեզի թէ մնացած է քեզի համար յոզնեցուցիչ ճամբորդութիւն մը որ պիտի քալես միւչև տաժանելի և մուժ օրերուն վախճանին։

Ուրեմն զիտցի՛ր թէ Յիսուս Քրիստոս է ան-  
դուգական նորոգիչը կեանքի, Փորձէ՛ Զայն Ան-  
պիտի առնէ այդ ըստ երեւոյթին ջախջախուած  
կեանքն ու անոր բեկորներէն աւելի գեղեցիկ  
հատ մը պիտի շինէ, որուն նմանը երբէք դուն  
քեզի պիտի չի կընայիր շինել, նոյն իսկ ամբող-  
ջէն: Քու յոդնած հոգիդ իր երկոր ատենէ ի-  
վեր փնտռած հանգիստն անոր մէջ պիտի  
գտնէ: Կեանքի այն բեկորները՝ որ Աստուծմէ-  
ժառանգականութիւն մնացած են քեզի, շատ  
մեծ ուրախալի օրերու պատճառ պիտի ըլլան,  
քան ան բոլոր անցած տարիները, որոնք իրենց  
տիտուր ողբը կը մըմնջեն քու հոգւոյգ խորքին  
մէջ:

\*\*\*

Ինչո՞ւ հոսանքէն քշուիմ անշաւիդ ծովուն  
վրայ, առանց կողմնացուցի, աստղի և քարտե-  
սի: Քանի որ երբ ես հոսանքէն կը քշուիմ,  
Աստուծոյ ինծի համար ըրած ծրագիրը թե-  
րահաւատ օրախո դրան առջև կ'սպասէ: Նա  
մէն օր երկինքէն պիտի յայտնէ ինծի մաս  
մը: Ամէն օր վայրագոյրէն մաս մը պիտի վեր.  
յընէ: Ինչո՞ւ մոլորիմ, ինչո՞ւ տարութերուիմ և  
ընկլմիմ: Հոսանքէն քշուիմ երբ Աստուծած կը  
վարէ զէկը: Հոսանքէն քշուիմ երբ Աստուծած  
այնչափ յատակ կը գծէ ճամբան: Հոսանքէն

քշուիմ երբ ուղղակի զէպի նաւահանգիստը  
կրնամ նաւարկել: Հոսանքէն քշուիմ երբ եր-  
կինքը կ'ողջունէ զիս: Օգնէ՛ ինծի, Աստուծած  
իմ, որ ծրագրածդ կեանքին հաւատամէ Օգնէ՛  
ինծի որ իմ կեանքիս բեկորներն ամէն օր ըն-  
դունիմ: Ո՞հ թէ իմ կեանքս քու կամքիդ չի  
հակառակէր: Աստուծոյ յանձնուող կեանքը  
պիտի զանէ իրեն համար Աստուծոյ ծրագրած  
կեանքը:



2534

Դեմք առ պատրի առ առ  
 առ առ սեպական առ պատրի առ  
 առ առ առ առ առ առ առ առ առ  
 առ առ առ առ առ առ առ առ առ  
 առ առ առ առ առ առ առ առ առ առ  
 առ առ առ առ առ առ առ առ առ առ  
 առ առ առ առ առ առ առ առ առ առ  
 առ առ առ առ առ առ առ առ առ առ  
 առ առ առ առ առ առ առ առ առ առ  
 առ առ առ առ առ առ առ առ առ առ  
 առ առ առ առ առ առ առ առ առ առ  
 առ առ առ առ առ առ առ առ առ առ

ԱՀ

ՀՀ Ազգային գրադարան



NL0029492

O

Truth

2456